«Էդիթ Պրինտ» հրատարակչություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ Ազգային տոների, ծեսերի կազմակերպման առանձնահատկությունները կրթական գործընթացում

Հաստատություն՝ Սյունիքի մարզ, «Կապանի «Սյունիք» ՆՈՒՀ» ՀՈԱԿ

Դաստիարակ՝ Մարիյա Գևորգյան

Ղեկավար՝ Ժաննա Ավետիսյան

ԵՐԵՎԱՆ- 2023

Բովանդակություն

1. Ներածություն 3
2. Նոր տարի 7
3. Երեխաների պաշտպանության օր 9
4. Սուրբ Զատիկ 10
5. Բարեկենդան 12
6. Տրնդեզ կամ Տեառնընդառաջ 14
7. Ծաղկազարդ 15
8. Անձրևաբեր և անձրևախառն ծեսեր 18
9. Վարդավառ 19
10. Խաչբուռ 22
11. Պարապմունք 23
12. Եզրակացություն 25
13. Օգտագործված գրականության ցանկ 26

Ներածություն

Հայ ազգը աշխարհի ամենահին ազգերից է: Այն ունեցել է ավելի քան 5000տարվա պատմություն: Լինելով առաջին քրիստոնյա ազգը, պահպանել է մի շարք ծիսակատարություններ: Սակայն դարերի ընթացքում այն կարծես մոռացվել է: Չնայած այն ամենին, որ մեզ միշտ փորձել են ջնջել, գողանալ մեր պատմությունը, այնուամենայնիվ մեզ հասել է ծեսեր, որոնք նոր սերունդն փորձում է նշել և պահպանել այն ու փոխանցել սերնսեսերունդ:

Այդ ծեսերից է

- Ազգային ծեսեր, տոներ
- Ամանոր, Սուրբ Ծնունդ
- Տեառնընդառաջ
- Բարեկենդան
- Զատկական ավագ շաբաթ
- Ծաղկազարդ (Ծառազարդար)
- Սուրբ Հարություն կամ Զատիկ
- .Համբարձում
- Վարդավառ
- Խառատյան Ազգային տոներ
- Սամվել Մկրտչյան «Տոներ»
- Հայկական հարսանյաց ծես

Ծեսերի իրականացումը կրթահամալիրում նպատակ ունի երեխաներին փոխանցել մշակութային ժառանգության բազմաշերտ արժեքները՝ նպաստելով երեխաների հայեցի դաստիարակությանը և իրական արժեքների ձևավորմանը: Ճիշտ է մանկահասակ երեխաները ամբողջովին չեն կարող ընկալել ծեսերի իմաստը ու նշանակությունը, սակայն նրանց ճիշտ ուղղորդելով և օրինակ ծառայելով կարելի է շատ մեծ արդյունքների հասնել:

Նախադպրոցական տարիքից պետք է երեխաների մոտ ձևավորել հստակ կողմնորոշում կյանքի նկատմամբ, նրանց մոտ դաստիարակել բարոյական սկզբունքներ և հարգանք ընտանիքի, հարգանք հայրենիքի անցյալի և ներկայի,սրտացավություն՝ ապագայի նկատմամբ:

Ընտանիքի, ընտանեկան ավանդույթների նկատմամբ հարգանքի,սիրո զարգացումը նախադպրոցական տարիքի երեխաների բարոյական և հայրենասիրական դաստիարակության առաջին քայլն է: Ուսուցիչների և ծնողների առաջնային խնդիրներից մեկը երեխաների մոտ հնարավորինս շուտ սեր և հարգանք արթնացնելն է իր ազգային պատկանելիության, հայրենիքի ձեռքբերումների, նվաճումների, հետաքրքրություն կյանքի նկատմամբ:

Երեխաների մեջ ձևավորել գիտելիքներ իր ազգային պատկանելության վերաբերյալ,ձևավորել ազգային մտածելակերպ:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում սանի համար ազգային ծեսի ճանաչման ամենաարդյունավետ ձևը խաղն է:Ազգային, ծիսական, մանկական խաղերը նպաստում են երեխաների ֆիզիկական, հոգեկան, մտավոր հնարավորությունների զարգացմանը: Ծիսական խաղերը, բացի հետաքրքիր ու տպավորիչ լինելուց, զարգացնում են մանր և խոշոր մկանային մոտորիկան, ընդհանուր շարժումային համակարգը, դրանք թատրոնի նման սինթետիկ արվեստ են դառնում, որոնք ինտեգրում են ինչպես երեխայի զարգացման բոլոր ոլորտները, այնպես էլ գործունեության բոլոր ձևերը:

Աշխատանքի ընթացքում օգտագործված հիմնական մեթոդներն են՝

●խմբային աշխատանք,

●զրույց,

●աշխատանքի դաստիարակություն,

●դիտման մեթոդ,

●գործնական աշխատանք:

Ծեսն այն միջավայրն է, որտեղ մասնակիցները ծեսի նախապատրաստման և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողություններ և հմտություններ ձեռք բերելով ու փոխանցելով, յուրացնում են ծեսը:

Ծիսական միջավայրում կատարում են ուսուցանված երգերը, պարերը, մասնակիցներն ազատ են իրենց ստեղծագործական մտքի մեջ, միևնույն ժամանակ նախօրոք անպայման պատրաստվում են՝ ծանոթանալով ինչպես ծեսի, այնպես էլ ծեսի հետ կապված գործողությունների, ծիսական պարագաների հետ, որոշում՝ ինչ և ինչպես են կատարելու, որ գործողություններն են,որոնք այսօրվա կյանքով ապրողը կարող է կատարել:

Ազգային մշակույթի յուրացումը դրված է նախակրթարանի ծրագրի հիմքում, այս դեպքում ազգային ծեսերի իրականացումը դառնում է յուրացման համար հենակետերից մեկը, քանի որ այն արդյունավետ նոր կազմակերպման ձևերից է:

Ծեսը իրենից ներկայացնում է համակարգված գործողությունների ընթացք:Այն միջավայր է, որտեղ մասնակիցները նախապատրաստական և իրականացման ընթացքում կիրառում են իրենց կարողությունները, հմտությունները, գիտելիքները:

Ծանոթանալով ինչպես ծեսի, այնպես էլ ծեսի հետ կապված գործողությունների, ծիսական պարագաների հետ, որոշում ինչ և ինչպես են կատարելու, որ գործողություններն են, որոնք այսորվա կյանքով ապրողը կարող է կատարել: Գործողություններից, բացի, ունի տոնական մաս, որտեղ կարող են կատարվել ուսուցանված երգերը, պարերը, խաղերգերը:

Ծեսը լայն տարածում ունի հավատալիքներում, կրոնում, կենցաղում, դիվանագիտական հարաբերություններում և այլն:Ծեսից դուրս չի կատարվում ո՛չ մոգական գործողություն, ո՛չ կրոնական պաշտամունք:Ծեսը խորհրդանշական ձևերով վերարտադրում է նաև ժողովրդի անցյալի կարևոր փուլում կատարված իրադարձությունները և դրանց միջոցով ապահովում ազգի, հասարակության միասնականությունը:

Օրինակ՝ հայոց ավանդական կենցաղում բավական տարածված են խնձորի հետ կապված ծեսերը, որոնք հաճախ կազմակերպվում են վարդավառին:Տոնի մասնակիցները խնձոր են խորովում և խորոված խնձորը բաժանում:Տոնակատարության ողջ ընթացքում խարույկը վառվում է:Պարերը կատարվում են կրակի շուրջը:Մոխրի մեջ դրված են խնձորներ, որոնք պետք է խորովվեն մինչ լուսաբաց:Լուսաբացին արևի առաջին ճառագայթների հետ խարույկահանդեսը վերջանում է արշալույսը ողջունող երգ խմբապարով օրինակ, հետևյալ բովանդակությամբ:

Վարդ է բացվել առավոտյան խաղերով,

իմ յարն այգում վարդ է քաղում մաղերով:

Վարդ է բացվել վարդավառի կիրակին,

Քու սերն ընկել է իմ սրտի պուրակին…

Ծեսի իրականացումը նախակրթարանում հենց ծես է՝ ուսումնական <<արարողակարգ>>:Սա սովորական ուսուցում չէ, սա միասին ապրել է՝ խաղով, երգ ու պարով, ավանդական և ոչ ավանդական տարրերով հագեցած:Դաստիարակը, ծնողը այն մարդիկ չեն, ովքեր ինչ-որ բան են սովորեցնում կամ թելադրում, այլ մարդիկ են ովքեր ոգեշնչում են, որ սանը, սովորողը ինքնուրույն բացահայտի, հայտնագործի ու ապրի իմացումի իրեն հատուկ, յուրովի հրճվանքը:

Ծեսի իրականացումն անարդյունավետ ու ինքնանպատակ կլինի, եթե այն չլինի կյանքով ուսուցում, որտեղ սանն ինքն է խաղում, բացահայտում, և այս ամենն անընդհատ սանի

համար հայտնագործությունների անվերջ շղթա, որով ապրում է իմացումի անծարյածիր հրճվանքը:

Նախակրթարանում, ինչպես և իրական կյանքում, ծիսական գործողությունը որոշակի փուլեր է ենթադրում՝

●ծեսի նախապատրաստում,

●ծիսակատարություն, որը ներառում է ծիսական երգեր,ոտանավորներ, պարեր, ազգային ծիսական խաղիկներ-թռնոցիներ, ծիսական տիկնիկներ,

Կերպարներ, ծիսական ուտեստներ և այլն:

ՆՈՐ ՏԱՐԻ

"... Հունվարի 1-ի քաղաքացիական Նոր տարին այունեցիները չէին նշում: Առավել ևս այդ օրվանից պասի օրեր էին սկսվում: Միայն Նոր Գորիսում ծառայողները կատարում էին պաշտոնական այցեր միմյանց տներ և դրանով ավարտում ամանորյա տոները: Նոր

տարին Սյունիքում սկսվում էր Նավասարդի տոնով, որը սովորաբար նշվում էր նոյեմբերի կեսերին՝ 10-ից մինչև 20-ը ընկած ժամանակահատվածի առաջին կիրակի օրը՝ Նախրաթողին: Այդպես էր նաև Լեռնային Ղարաբաղում, Մեղրիում ու Ագուլիսում, Սալմաստում, որտեղ տոնվում էր նոյեմբերի 13-ին մոտ, և համատարածաբար՝ մինչև Ալաշկերտ:

Հին ժամանակներում Նավասարդը տոնվում էր օգոստոսի 11-ից մինչև սեպտեմբերի 9-ը Հայաբնակ արևմտյան վայրերում Նավասարդի տոնակատարությունն անծանոթ էր: Այնտեղ հունվարի մեկին տոնվում էր Կաղանդը՝ իրեն հատուկ սովորություններով: Զանգեզուրում նախրապանը և տան ծառայողները վարձվում էին մինչև տոնական օրերը: Նախրապանը Նոր տարուն անպատճառ պիտի իր տանը մնար և հագներ իր ամենամաքուր շորերը: Մյուս տոներին նա կարող էր նաև դուրսը՝ դաշտում մնալ: Դրանով շեշտվում էր, որ նրա աշխատանքների մի շրջանը վերջացած է: Ամանորին վերջ էր դրվում բոլոր անձնական խռովություններին: Իրար հետ խռովածներին հաշտեցնում էին, և նրանց մեջ եղած դժգոհությունների բոլոր առիթները համարվում էին վերացած: Այսպիսով, Նոր տարին պիտի սկսվեր ընդհանուր հաշտությամբ և հին հաշիվների վերացմամբ, որով խաղաղություն կապահովվեր ամբողջ գալիք տարվա համար:

Բնորոշ է, որ Նավասարդ բառը ըստ լեզվագետների բացատրության ունի իրանական ծագում: Նրանք այդ բառը համարում են հոմանիշ navasard բառին, որը կազմված է nava-նոր (զենդ.) և sard- տարի արմատներից:

Տոնից մեկ շաբաթ առաջ սկսվում էր պասը Տոնը սկսվում էր կիրակնամուտին, սակայն իսկական տոնական խրախճանքը տեղի էր ունենում կեսգիշերից հետո՝ մեծ մասամբ լուսաբացից առաջ: Ամեն տան մեջ անպատճառ պիտի եփվեր մսով կերակուր՝ կճրճախաշ, կրճախաշ կամ կուրկուտավ ճաշ (ցորենը թակում են սանդի մեջ, տաք ջրով լվանում, կաթսայի մեջ մեկ շերտ կուրկուտ, մեկ շերտ մատղաշ միս՝ ոչխարի, այծի կամ խոզի, դարսում, խուփը լավ ծածկում և թոնրի մեջ կրակի վրա մինչև առավոտ պահում Չպիտի խառնեին, շերեփ չպիտի կպչեր՝ նրա համար, որպեսզի տարին էլ խառնաշփոթ չանցնի) :

Պարսկաստանից գաղթած գյուղերի համայնքներում սովորաբար եփվում էր հարիսա՝ որպես նոր սկսվող տարվա երկրագործական աշխատանքների առատության խորհրդանիշ:

Զանգեզուրում Նավասարդի օրը կար սովորություն այստեղ աշխատում էին դեռ լույսը չբացված այցելել այն տները, որտեղ այդ տարին ննջեցյալ է եղել Բարեկամները՝ նվերներ բերելով, ննջեցյալների տերերի հետ ողորմաթաս էին խմում: Առավոտ կանուխ տնից տուն իրար «լուսեր» էին ուղարկում: Դա մեծ կլոր սկուտեղ էր ՝ «մէժմահու»", որի վրա գեղեցիկ դասավորված էին զանազան «խոշկաբար» չոր միրգ և քաղցրավենիք. միրգ, եփած հավ, կորկոտ՝ մեջտեղում՝ վառած մոմերով: Այդ ամենը հետո միասին վայելում էին:

Հատուկ «լուս» էր պատրաստվում քավորի համար այն տանը, որտեղ այդ տարի նա երեխա էր «խտտել» Քավորն էլ «մէժմահին» վերադարձնում էր որևէ նվերի հետ, օրինակ՝ «յայլուխ»՝ գլխաշոր, խալաթ, Շամախու շալ, կուլա և այլն: Քավորն իր կողմից խոնչա էր ուղարկում իր այդ տարվա ամուսնացրած նորապսակներին: Խոնչա բերողը ստանում էր իր նվերը Այս սովորությունների մեջ քավորը հանդես էր գալիս որպես ամուսնական կապեր հաստատող և մանկածնությունը խրախուսող մագիկ ուժ ունեցող անձնավորություն:

Երեխաների պաշտպանության օր

«Կապանի «Սյունիքի» ՆՈՒՀ» ՀՈԱԿ

Սուրբ Զատիկ

«Կապանի «Սյունիքի» ՆՈՒՀ» ՀՈԱԿ

Սուրբ Զատիկի Ավանդույթներ

Հայկական ավանդույթում հավկիթներով հավկթախաղ է տեղի ունենում երկու հոգու միջև։ Կոտրող հավկիթի տերը հաղթող է ճանաչվում և ուտում կոտրված հավկիթը։ Նաև ավանդույթ է Զատկվա հավկիթներն ուտել թարխունով, աղով և լավաշով։

Արևմտյան երկրների ավանդույթում հավկիթները թաքցվում են խոտերի կամ կանաչների մեջ, և երեխաները փորձում են դրանք գտնել։ Այն կոչվում է «Զատկվա հավկթաորս»։

Զատիկը հայերի մոտ տոնվել է ապրիլ ամսին՝ շատ ավելի վաղ, քան քրիստոնեությունն է։ Այն զատիկ է կոչվել ձմեռվանից գարունը զատելու առթիվ։ Վարկածներ կան, որ սկզբնական շրջանում այն եղել է անշարժ տոն և համընկել է մարտի 21-ի գիշերահավասար օրվա հետ՝ գիշեր – ցերեկն իրարից զատելու իմաստով։ Հայ հեթանոսական նոր տարում և պարսկական Նովրուզ տոնին, որոնք սկսվում են գարնան գիշերահավասարին, ևս ներկվում են հավկիթներ։ Հայ հեթանոսական նոր տարում ևս ներկված հավկիթներն ուտում էին թարխունով, աղով և լավաշով։

Բարեկենդան

Բարնկենդան, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու շարժական տոներից, նշվում է Սուրբ Սարգսի տոնից մինչև Մեծ պաս ընկած ժամանակաշրջանը, Այդ օրը քահանայական դասին և ժողովրդին արատնվամ է ճոխ սեղան և զվարթություն՝ հաջորդող պահքը ուրախ սրտով մտնել և երկարատն պահոց օրերին դիմակայելու համար: Տոնն ավարտվում է Բուն Բարեկենդանով, որը նշվում է շաբաթապահքերի նքնի պահքի՝ նախընթաց կիրակի օրը՝ հատկապես յուղալի ուտեստներ, մսեղեն և կաթնեղեն:Բարեկենդանին մարդիկ զվարճանում էին. երգում, պարում, գցում ճոխ սեղաններ, դիմակավորվում, կազմակերպում խաղեր և ներկայացումներ: Գործածում էինԲարեկենդան տոնը խոր արմատներ ունի, որոնք ձգվում են դեպի հեթանոսական շրջանՏոնի հիմբում ընկած էր բնության զարթոնքը և տարվա սկիզբը, որն ավանդաբար նշվում էր մարտի 21-ին: Հնում մարդիկ հավատացել են, որ միմյանց կենդանություն մաղթելով նրանք աղերսել են մերին ուժերին պաշտպանել իրենց կյանքը չար ուժերի ազդեցությունից: Տոնը ներառել է նաև բնության իրերի և երևույթների պաշտամունքն արտահայտող ծեսեր ու սովորույթներ: Բնության զարթոնքի և մահվան պատկերացումներն առնչվել են մահվան և կյանքը, ծննդի և վերազարթոնքի հավերժական փոխանցումներին: Դրանք մասամբ տեղ են գտել նախնիների պաշտամունքին նվիրված ծեսի փնջումՀետագայում տոնին բնորոշ գծերը փոխանցվել են Նավասարդին և Ամանորին:

Խորհուրդը

Բարեկենդանը ուրախության ու զվարճանքի օր է: Այն հիշեցնում է Ադամի և Եվայի կյանքը դրախտում՝ վայելքի և անհոգության մեջ, այսինքն՝ դրախտային կյանքի օրինակն է, որտեղ մարդ կարող էր ճաշակել բույոր պտուղները, բացի բարու և չարի գիտության ծառերի պտուղներից:

Բարեկենդանը ժողովրդական տոնախմբության, խրախճանքի և ազատության օր է և հավատացյալ ժողովրդին հիշեցնում է նախկին դրախտը, դրախտային երջանկությունն ու զվարթությունը:Բարեկենդանին մարդիկ պարում են և ուրախանում, արտահայտում իրենց հոգու ուրախությանը: Դրախտում մարդը միշտ ապրել է Աստծո ներկայությամբ և տեսել, որ Ատոված տալիս է իրեն երջանիկ և ուրախ ապրելու հնարավորություն: Քանի որ մարդու նախահայրերը՝ Ադամն ու Եվան մեղքի պատճառով վտարվեցին դրախտից, ապա մարդը միշտ երանությամբ է հիշում դրախտի կյանքը:

Բարեկենդանի մեկ այլ խորհուրդն է չարի ու բարու պայքարը: Այն արտահայտվել է հիմնականում ժողովրդական խաղերում, որոնց ժամանակ անարդարները ծաղրի և ենթարկվել, դասվել և պատժվել:

Սովորույթներ և ավանդույթներ

Հայերի մեջ Բարեկենդանը ամենասպասված ու ժողովրդական տոներից մեկն է: Տոնին պատրաստվում էին ընտանիքի բոլոր անդամները առանց բացառության: Մարդիկ զվարճանում էին, տրվում խրախճանքին ու պատրաստում ճոխ սեղաններ: Նախապատվությունը տրվում էր հատկապես մսեղենին, յուղոտ կերակրատեսակներին ու կաթնեղենին:

Բարեկենդանի առաջին օրերին ընդունված է պատրաստել գաթա ու հալվա:

Երեկոյան ուտում էին կաթնապուր ու մածուն:Պատրաստում էին նաև փափաթիլա, սրոռն և բխբխիկ կոչվող ճաշատեսակները:Որոշ տեղերում նախապատվությունը տրվում էր ձավարով կամ համեմունքներով լցոնած խորոված ոչխարին:Պարտադիր ճաշատեսակը խաշիլն էր, որը պատրաստվում էր մեծ քանակությամբ:

Բերաններս փակում ենք սպիտակ ձվով:
Աստված արժանացնի կարմիր ձվով բաց անելու:

Հրապարակներում կազմակերպվում էին տարատեսակ խաղեր, պարեր, թատերական ներկայացումներ և դիմակահանդեսներ:Բարեկենդանը բացի կերուխումից ու խրախճանքից նաև ազատության օր էր: Պատահական չէ, որ այդ օրը վանքերում անվանում էին «Աբեղաթող» («աբեղա» և «թողուլ»՝ թողնել, արձակել բառերից): Այսինքն՝ այդ օրը աբեղաներն ազատվում էին վանական խիստ կյանքի օրենքներից:Բուն Բարեկենդանի նախորդող օրը ժամերգության ընթացքում եկեղեցու խորանի վարագույրը քաշվում է, խորանը ծածկվում մինչև քառասունօրյա պասի ավարտը:Պասի ժամանակ մատուցվում է փակ պատարագ: Ամուսնություններ տեղի չէին ունենում, արգելվում էր մատաղ անել:

Խաղեր

Տոնի տարածված խաղերից էր ճլորթին կամ ճոճախաղը: Այն կազմակերպվում էր բարձր ու դիմացկուն գերաններ ունեցող գոմերում: Որանի սայլի ճոպանը կախում էին հեծանից և նրա երկու օղակների վրա դնում 2 մետրանոց տախտակ: Գետնից մեկ մետր բարձր այդ տախտակի ծայրին աղջիկ ու տղա էր կանգնում: Ճոճախաղերը հաճախ վեր էին ածվում մրցախաղերի՝ ով ավելի մեծ կորագծով կճոճվեր:

Տարոնում տարածված էր կշռեցուկ խաղը: Աղջիկն ու տղան նստում էին առաստաղի գերաններից կապված մի երկթաթանի ճոճանակի մեջ և կշռվում՝ իմանալու, թե մյուս տարվա Բարեկենդանին *«արդյոք իրենց կյանքից անցնող տարին, որ պատված էր ամբողջ հոգսերով, ո՞րքան հալել ու մաշել, ծյուրել ու ցամաքացրել է իրենց անձը»*:

Տարածված էին աքլորախռիվը, գոմշակռիվն ու հատկապես «ուղտ խաղացնելը»:

Տարոնում նաև փայտե ձի էին պատրաստում և, զարդարելով այն, խմբով պտտում գյուղի մեջ:

Տարածված էին նաև <u>լախտախաղը</u>, գնդակախաղը, վեգը (ճան), թոլոլանգին, տասսիցը և մատնին:

Տրնդեզ կամ Տեառնընդառաջ

Հայ Առաքելական Եկեղեցին փետրվարի 14-ին նշում է ժողովրդի ամենասիրված տոներից մեկը՝ Տրնդեզը կամ Տեառնընդառաջը (Հիսուսի՝ տաճարին ընծայման տոն):Հենց այդ օրն են ծնողները բերել նորածին Հիսուս Քրիստոսի Երուսաղեմի տաճար:Դա տեղի է ունեցել Սուրբ ծնունդից 40 օր անց:Երուսաղեմի տաճարում Սուրբ Ընտանիքին դիմավորել է Սիմեոն ծերունին:

Ինչպես <<Դոնդեզը>> դարձավ <<Տրնդեզ>>

Այս եկեղեցական տոնի արմատները տանում եբն դեպի նախաքրիստոնեական անցյալ, երբ մեր նախնիները դեռ կրակապաշտ էին:Եվ այն ժամանակ այդ տոնը կոչվում էր <<Դրնդեզ>> , ինչը հայերեն բառացիորեն նշանակում է <<խոտի դեզ վառել Տիրի պատվին>>:Երբ Հայաստանը 301թ.-ին ընդունեց քրիստոնեությունը որպես պետական կրոն, տոնի անվանումը փոխվեց և <<Դրնդեզը>> դարձավ <<Տրնդեզ>>՝ հայերեն <<տեր>> բառից:

Տրնդեզի առասպելը

Տրնդեզն, ըստ էության, խորհրդանշում է ձմռան հրաժեշտն ու գարնանամուտը:Այս տոնի ծագումը ժողովրդական բանահուսությամբ կապվում է կրակի աստված Վահագնի մասին պատմող առասպելի հետ:ԼՀոգնելով ցրտաշունչ ձմեռից՝ արյականները խարույկներ են վառում՝ արևին օգնելու և գարնանամուտը արագացնելու համար:Արևի աստվածային կրակից ծնված Վահագնը սպանում է ջրի աղբյուրը հսկող Վիշապին, որը մարդկանց ջուրը էր տալիս մարդկային զոհերի դիմաց:Երբ ջուրը սկսում է հոսել, հողը ծաղկում է:Այդպես, կրակը օգնում է հաղթել ձմռանը:

Տրնդեզի խորհուրդը

Ըստ հրեական օրենքի՝ ամեն մի արու զավակի ծնունդից հետո, երբ լրանում էին սրբագործման 40 օրերը, նորածնի մայրն իր երեխայի հետ այցելում էր Տաճար, զոհ և իր զավակի համար օրհնություն ստանում քահանայից: Այսպես և Ս. Աստվածամայրը 40-օրական Հիսուսի հետ ներկայանում է Տաճար:

Հայ Եկեղեցու կանոնի համաձայն, տոնի նախարեին՝ երեկոյան ժամերգությունից հետո, կատարվում է նախատոնակ: Այն ավետում է Տերունի տոնի սկիզբը: Նախատոնակի արարողության ավարտին կատարվում է Անդաստանի արարողություն, որի ընթացքում օրհնվում են աշխարհի չորս ծագերը: Եկեղեցու կանթեղներից վերցված կրակով վառվում են խարույկներ՝ իբրև Քրիստոսի լույսի խորհրդանիշ:

Ծաղկազարդ

Ծաղկազարդ (ծառզարդար, ծառկոտրուկ), գարնանային բացօթյա տոնախմբությունների սկիզբն ազդարարող եկեղեցական և ժողովրդական տոն, որին հաջորդում է Ավագ շաբաթը։Կատարվում է Զատկից մեկ շաբաթ առաջ՝ ի հիշատակ Քրիստոսի «Երուսաղեմ մտնելու օրվա»:

Ծաղկազարդի օրը հայոց եկեղեցիները զարդարվում են ուռենու ճյուղերով, առավոտյան կատարվում է ժամերգություն և Անդաստանի կարգ, որից հետո օրհնված ճյուղերը բաժանվում են հավատացյալ ժողովրդին, որոնք պահվում էին մինչև հաջորդ ծաղկազարդ։ Դրանց վերագրվում էր բարիքի, առատության, պտղաբերության հմայական զորություն։ Հավատալով, որ դրանցով կավելանա յուղը, կբարձրանա կաթնատվությունը, ձվատվությունը, դրանք դրվել են խնոցում, մսուրքում, հավանոցում և այլն։ Անդաստանի արարողությամբ օրհնվում են աշխարհի չորս կողմերը, մասնավորապես Հայոց Հայրապետությունը, հայրենիքը, քաղաքներն ու գյուղերն իրենց բնակիչներով, վանքերը, արտերը և տարվա պտղաբերությունը։ Այն տարվա մեջ կատարվում է 25 անգամ։

Ծաղկազարդի երեկոյան կատարվում է Դռնբացեքի արարողությունը, որի ընթացքում, «Բաց մեզ, Տէր զդուռն ողորմութեան» շարականի ներքո բացվում են եկեղեցիների խորանների վարագույրները՝ խորհրդանշելով Տիրոջ երկրորդ գալուստը, աշխարհի վախճանը և Վերջին դատաստանը։ Ժամանակին այս արարողությունը կատարվել է եկեղեցու փակ դռան առջև։ Կարդացվում է «Երգ Երգոցի» մի հատվածն ամբողջությամբ։

Ծաղկազարդի օրը Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տնօրինությամբ հռչակված է որպես մանուկների օրհնության օր, քանի որ Տիրոջ՝ Երուսաղեմի տաճար մտնելու ժամանակ մանուկներն աղաղակում էին՝ ասելով. «Օրհնությո՛ւն, Դավթի որդուն» (Մատթ. 21:15)։ Ծաղկազարդի տոնից հետո՝ երկուշաբթիից մինչև Սուրբ Հարության տոնը կոչվում է Ավագ շաբաթ։

Ենթադրվում է, որ նախաքրիստոնեական ժամանակաշրջանում տոնը նվիրված է եղել ջրի և անձրևի աստվածուհի Նարին։ Նարը պտղաբեր անձրևներ էր ուղարկում երկիր։ Երաշտի ժամանակ մարդիկ տիկնիկների և ծիսական երգերի ուղեկցությամբ մաղթանքներ էին ուղղում Նարին, որպեսզի նա անձրև տար դաշտերին։ Ծեսի մաս կազմող տիկնիկը ունի տարբեր անուններ՝ Նուրի, Հուրի, Խուճկուրուրիկ, Չիչի-մամա, Ճիճի-մումա և այլն։

Ծաղկազարդը եղանակի՝ գարնան պաշտամունքի տոն էր։ Այն նվիրված էր ոչ միայն ջրին, այլև ծառին ու ծաղկունքին։ Ծառի պաշտամունքը փոխանցվել է սերնդեսերունդ և համարվել բնության կենդանության ու վերապրումի արգասիք։ Տոնի հիմքում ընկած է նաև Կենաց ծառի գաղափարը։ Այն շեշտում է կյանքի վերընթաց զարգացումը՝ ծննդից մինչև ծաղկունք ու պտղաբերություն։ Դրա բարձրագույն նպատակը անմահությունն է։

Տիեզերական կամ Կենաց ծառի գաղափարն է ունեցել նաև Ամանորի տոնածառն ու Վարդավառի խնդումը։ Ամանորին ծառը զարդարել են չրերով ու մրգերով, իսկ Ծաղկազարդին՝ փնջած ձվերով, որոնք ունեցել են նաև չարխափան նշանակություն։ Ծաղկազարդին ընդունված է եղել ծառերը զարդարել գունավոր լաթերով։ Այդ պատճառով է, որ տոնը ստացել է Ծառզարդար անվանումը։ Հետագայում ծառի պաշտամունքը շարունակվեց նաև քրիստոնեական շրջանում։ Սրա

ապացույցն են «Տաճար մայրիի» (անտառի տաճար) անունը ստացած եկեղեցին Խոսրովի արգելոցում։

Քրիստոնեության ընդունումից հետո տոնը հարմարեցվել է քրիստոնեության գաղափարախոսությանը և նշվել որպես Հիսուս Քրիստոսի՝ Երուսաղեմ մտնելու օր, երբ նրան դիմավորել են ձիթենու կանաչ ոստերով, ինչը նկարագրում են բոլոր ավետարանիչները.

«Եվ բազում ժողովուրդ իրենց զգեստները փռեցին ճանապարհի վրա, իսկ ուրիշներ ծառերից ճյուղեր էին կտրում ու սփռում ճանապարհի վրա»(Մատթ. 29:99)։

Ժողովրդի բազմությունը աղաղակում է ու ասում.

«Օվսաննա, օրհնյա՛լ լինես դու, որ գալիս ես Տիրոջ անունով» :

Ավանդույթներ

Նորապսակ երիտասարդները և նշանված տղաները շաբաթ լույս կիրակի կեսգիշերին արմատախիլ էին անում բողբոջած ուռենիները և բերում տուն։ Եկեղեցիները ևս զարդարում էին ուռենու ճյուղերով, իսկ եկեղեցու բակում՝ ճյուղերից մի մեծ կույտ էին շինում։ Այդ օրը աղջիկները եկեղեցի էին գալիս նույն օրը հավաքած ծաղիկներով։

Այդ օրը կարելի էր ամենուր լսել տղաների ու պատանիների ձեռքով պատրաստված ճռռացող ինքնաշեն խաղալիքների՝ կարկաչաների ու ճեռերի ձայնը։

Մարդիկ, մոմերը ձեռքերին, խմբվում էին եկեղեցում և բակում, և կեսգիշերին սկսվում էր ուռենու ճյուղերն օրհնելու ծեսը։

Հաճախ Ծաղկազարդի օրը՝ Մեծ պասի ընթացքում առաջին անգամ տեղի էր ունենում հանպատրաստի նշանադրություն։ Փեսացուի մայրը, նախապես համաձայնեցրած լինելով հարսնացուի մոր հետ, վերցնում էր ուռենու ճյուղի վրա տեղադրված մոմերից մեկը, վառում այն, վրան հագցնում նշանդրեքի մատանին և հանձնում հարսնացուին։ Հարսնացուն ընդունում էր մատանին և համարվում էր նշանված։

Ժամասացության ավարտից հետո ժամավորները ջանում էին հնարավորինս շատ օրհնված ուռենու ճյուղեր տուն տանել, քանի որ ճյուղերին վերագրվում էր չարխափան և առատացնող զորություն, և դրանք օգտագործում էին տարբեր առիթներով՝ մինչև հաջորդ Ծաղկազարդը։ Ճյուղերը նաև գցում էին կարասներն ու ամբարները, թեթևակի հարվածում դրանցով անասուններին։ Ճյուղերից մեկն օգտագործում էին խնոցու համար՝ ստուգելու կարագի պնդությունը։ Ճյուղերից հյուսում էին պսակներ և դրանց միջով անցկացնում հավերին, որպեսզի դրանք գեր լինեին։ Երբեմն կանայք վառված մոմերը դուրս էին բերում եկեղեցուց և տանում գերեզմանատուն՝ տեղադրելով դրանք հանգուցյալների շիրիմներին։

Ծաղկազարդի օրը մարդիկ անցնում էին գարնանային հագուստի։

«Կապանի «Սյունիք» ՆՈՒՀ» ՀՈԱԿ էր այցելել Կապանի «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» եկեղեցու հովիվ Տեր Խաչատուր Հայրապետյանը երեխաներին հանգամանորեն ներկայացրերց Ծաղկազարդի խորհուրդը: Վերջում օրհնեց ձիթենու ճյուղերը և բաժանեց սաներին:

Անձրևաբեր և անձրևախառն ծեսեր

Նպատակը

- Ազգային ծեսերին նոր կյանք
- Ջրի (անձրևի) կարևորությունը, անհրաժեշտությունը բնության մեջ մարդու կյանքում:

Խաղարկում են ծիսական տեսարաններ, որոնք կարող են լինել ինչպես ժողովրդի կողմից արդեն խաղարկված (որոնք անպայման պետք է համապատասխանեն տվյալ տարիքի երեծաներին), այնպես էլ՝ իրենց կողմից ստեղծված երգեր, (Պուպլատիկինն էկեր է, հանիկ նինար) ասիկ բանաստեղծություն, խաղեր և այլն:

Ծեսերին նոր կյանք տալով՝ ստեղծում են նոր կերպարներ, նոր խաղեր, խաղում են ջրի հետ (ջրից վախն առնելու մանկական խաղերգ):

Անձրևաբեր ծեսին մասնակցեցին , նաև մեր մանկապարտեզի սաները և սովորեցին ծեսին վերաբերվող բոլոր առանձնահատկությունները:

ՎԱՐԴԱՎԱՌ

Վարդավառ կամ **Վարդեվառ**, որպես քրիստոնեական տաղավար տոն՝ **Քրիստոսի այլակերպություն** կամ **Քրիստոսի պայծառակերպություն,** հայ ժողովրդական նախաքրիստոնեական և քրիստոնեական տոն, ըստ եկեղեցական տոնացույցի նշվում է Զատիկից 14 շաբաթ կամ 98 օր հետո, կիրակի օրը՝ հունիսի 28-ից օգոստոսի 1-ն ընկած ժամանակահատվածում: Գրիգոր Լուսավորիչը փոխել է Հիսուս Քրիստոսի այլակերպության տոնով: Վարդավառը, կամ Քրիստոսի Պայծառակերպությունը, Հայ Առաքելական Եկեղեցու հինգ տաղավար տոներից է:

Հայաստանի շատ բնակավայրերում, սակայն տեղական ավանդույթի համաձայն, Վարդավառը նշվում է այլ օրերի՝ հուլիսի կեսերից մինչև օգոստոսի սկիզբը: Որպես օրինակ՝ Տավուշում, Լոռիում այս տոնը նշվում է հուլիսի 20-ին հաջորդող կիրակի օրը:

Վարդավառը հայկական ավանդական տոների շարքում ամենասիրելիներից մեկն է, ամառային ամենասիրված տոնը: Քաղաքներում Վարդավառն ավելի շատ համարվում է մանկական տոն, երեխաները հենց այդպես էլ ասում են «**ջրոցի** խաղալ» կամ «Վարդավառ խաղալ», այսինքն՝ ուրախ ջրել անծանոթներին և անցորդներին;

Վարդավառը տարբեր բնակավայրերում ուներ անվանման տարբեր տարբերակներ՝ պայմանավորված հայերենի բարբառային առանձնահատկություններով, ինչպես նաև տոնի գլխավոր ուխտավայրերի ու առավել տարածված բաղադրիչների գերակա անվանումներով: Այդ անվան տարբերակներից են՝ Վարթավառ (Արճակ), Վարդևոր (Լոռի, Ջավախք, Հարք-Բուլանխ, Կաղզվան), Վարդիվոր (Դերսիմ), Վառթիվոր (Զնաբերդ), Վըրթէվուր կամ Վըրթէվուր (Արցախ-Վարանդա), Վարթևոր (Նոր Նախիջևան), Վարթիվոր, Ճրճանքի օր (Շաղաթ), Ճրճան (Մարտիրոս-Վայոց Ձոր), Վրթիվեր (Այգեհովիտ-Տավուշ), Վըրդիվուր (Մեղրի), Վարդավար, Վարդըվուր կամ Վարդիվուր (Մոսալեռ), Վարթիվոր (Ղզլար), Պալլամ, Պարլում կամ Պարլամօն (Քեսապ) և այլն:

Ղևոնդ Ալիշանի կարծիքով, վարդավառ բառը ծագել է «*վարդ*» արմատից է և կապված է Աստղիկ դիցուհու պաշտամունքի հետ: Ըստ Գրիգոր Ղափանցյանի, վարդավառը խեթերեն բառակազմություն է՝ կազմված «*vadar*» (ջուր) և «*arr*» (լվանալ՝ ցնցղել իմաստով) բառերից: Որոշ հեղինակներ վարդավառ բառը համարում էին սանսկրիտից փոխառված: Հովհաննես Ծոցիկյանի կարծիքով, այդ բառի միայն առաջին հատվածն է («վարդ») սանսկրիտից թարգմանաբար նշանակում «ջուր», իսկ մյուս հատվածը՝ «ավար» հայերեն է՝ «թափել», «ցայտել» («վայրել» բառարմատից) իմաստով: Ֆնգլյանի կարծիքով վարդավառ նշանակում է «ջրի ուղի» և կապված է Անահիտ աստվածուհու հետ: Հունական միջավայրում տոնը ստուգաբանվել է վարդ-ծաղիկ համատեքստում: Հունարենում «ռոդոն» վարդ է նշանակում, դրանից Ռոդիզմոսը՝ տոնակատարություն, որի ժամանակ գերեզմանները զարդարվում էին վարդերով, Անթիզմոսը՝ *անթոս* (ծաղիկ) բառից՝ ծաղկում, Անթեփորիա (բառացի՝ ծաղկաբերություն, *Pascha rosarum* (լատիներեն՝ «Վարդերի Զատիկ), Վարտուվարիա (Վարդավառ՝ հոգնակի): Պավլոս Կարոլիդիսը (1849-1930) օրինակ, տոնն անվանել է «Վարդերի Զատիկ»:

«Այլակերպություն» կամ «Պայծառակերպություն» բառի բացատրությունը Քրիստոսի կենսագիրների թողած այն հիշատակությունից է, որի համաձայն՝ Թաբոր կոչված լեռան վրա Քրիստոսի պայծառացած կերպարանքը երևում է Պետրոս, Հովհաննես և Հակոբոս առաքյալներին:

Ծագում

Քրիստոնեություն

Քրիստոնեական ավանդույթի համաձայն այդ օրը Հիսուս Քրիստոսը Պետրոս, Հակոբ և Հովհաննես առաքյալների հետ բարձրանում է Թաբոր լեռան վրա՝ աղոթելու։ Տապից ու հոգնածությունից առաքյալները քնում են, իսկ աղոթող Քրիստոսի վրա լույս է իջնում, նրա դեմքն արևի նման պայծառանում է, իսկ հագի զգեստը ձյունի նման ճերմակում այնպես, որ ամբողջ լեռը ողողվում է լույսով։ Այդ փայլից առաքյալներն արթնանում են և ականատեսը դառնում Քրիստոսի «Պայծառակերպության» և «Այլակերպության» հրաշքի։ Հայ եկեղեցին, Գրիգոր Ա Լուսավորչի կարգադրությամբ, նախկինում տոնել է հայկական տոմարի տարեգլխին, Նոր տարվա առաջին օրը՝ Նավասարդ ամսվա 1-ին, որ համապատասխանում է օգոստոսի 11-ին։ Գրիգոր Ա Լուսավորիչը քրիստոնեացրել է Նավասարդի հեթանոսական այն մեծ տոնը, որը հանդիսավորությամբ կատարվել է հեթանոսական Հայաստանի գլխավոր սրբավայրեր Աշտիշատում և նրանից քիչ հեռու ընկած Իննակնյա մեհյանի շուրջը (Մշո Ս. Կարապետ վանքի տեղում) ։ 6-րդ դարում կաթողիկոս Մովսես Բ-ն (574-604) 551 թվականին Պայծառակերպության տոնը մտցրեց Զատկի տոների շրջանի մեջ և նշանակեց Համբարձման տոնից հետո 7-րդ կիրակի օրը։Վարդավառը որոշները կապել են նաև Համաշխարհային ջրհեղեղի կամ Նոյյան տապանի նշանավոր իրադարձության հետ։ Ըստ ավանդության, երբ Նոյ Նահապետը, ջրհեղեղից փրկվելով, հասնում է Մասիսի գագաթը և այնտեղից իջնում Նախիջևան՝ այդ օրվանից էլ սկսվում է հայոց Նավասարդ կոչվող ամիսը։ Որպեսզի ջրհեղեղի հիշատակը անմոռաց մնար, Նոյը որդիներին պատվիրեց՝ իրար վրա ջուր լցնել։ Ալիշանը կարծում էր, որ Վարդավառի ծագումը առնչվում էր Նոյան տապանի և Համաշխարհային ջրհեղեղի ավանդության հետ։

Վարդավառը ուխտագնացությունների տոն էր, ուխտագնացությունների համար ընտրվում էին գլխավորապես լեռները, ջրերի ակունքները։ Զանգեզուրում Վարդավառի ամենասիրված ուխտավայրը Խուստուփն էր, չնայած շատ էին գնում նաև Մեծ Իշխանասար, Մռավ, Մեծ Քիրսի, Դիզափայտ և այլ լեռնագագաթներին գտնվող սրբավայրերը։ Խուստուփ այցելում էին թե Կապանի, թե Մեղրու շրջանի ամենահեռավոր գյուղերից անգամ, և այստեղ հազարավոր մատաղներ էին արվում։ Շատերի համար ամենասիրված ուխտատեղը Մշո Սուրբ Կարապետի վանքն էր։ Սուրբ Կարապետ կատարվող ուխտագնացությանը մեծ կարևորություն էր տրվում։ Հետազոտողներն ասում են, որ Սուրբ Կարապետի վանքը Տարոնում, հատկապես Վարդավառի համաժողովրդական տոնախմբությունների օրերին, դարձել էր համայն Մերձավոր Արևելքի թե քրիստոնյաների, թե այլադավանների սիրված ու հեղինակավոր սրբավայրերից մեկը։ Վարդավառյան ուխտագնացությունները, միայն դեպի Ս. Կարապետ չէ, որ կատարվում էին։ Վարդավառի համար ուխտավայր կարող էր դառնալ ցանկացած սրբազան տարածք, մատուռները, Թուխ Մանուկ սրբավայրերը, սարերն ու ջրերի ակունքները։ Ըստ մի հետազոտության, Հայաստանի և Արցախի տարածքում այժմ կա շուրջ 160 ուխտավայր-սրբատեղի, որոնք այցելվել են Վարդավառի ժամանակ։

Տոնակատարություն

Վարդավառը ուներ տոնահանդեսի արարողակարգի հաջորդականություն, որ որոշակի հստակեցում էր մտցնում հանդիսությունների շղթայում։ Տոնին բնորոշ ծեսերը ընդհանրական էին, որ ըստ դրանց ամենուր տոնը բնորոշվում էր. այդպիսիք էին, օրինակ, միմյանց վրա ջուր ցողելու, աղավնիներ թռցնելու, միմյանց ծաղիկներ նվիրելու, եկեղեցի

հասկեր տանելու և օրինել տալու սովորությունները, ուխտագնացությունները, զոհաբերությունները, գիշերային հանդեսները և այլն: Կատարման ժամանակով Վարդավառը համընկնում էր դաշտերում հասունացած հացահատիկների հավաքին: Տոնի օրը գրեթե ամենուր հասկեր էին տանում եկեղեցի' խնդրելով, որ դաշտերը կարկուտից ու մորեխից անվնաս մնան: Ընդհանրացված սովորույթ էր, որ տարվա առաջին խնձորը ուտեն Վարդավառին: Սարերում Վարդավառի ամենաուրախ հանդեսներին հավաքվում էին լարախաղացներ, կազմակերպվում էին պարեր, տոնավաճառներ, և զբոսախնջույքներ: Ուխտավայրերում կատարվող վարդավառյան հանդիսությունները երբեմն հիշեցնում էին նավասարդյան տոնահանդեսները:

Վարդավառի տոնին մակապարտեզի սաները շատ ուրախ ու զվարթ խաղեր խաղացին , նրանց շատ դուր եկավ այս ուրախ տոնը:

Խաչբուռ

Հայերի մեջ հրաշալի ավանդություն կար խաչբուռի հետ կապված: Հայ գյուղացին հավատում էր, որ ցորենի ու գարու արտերի մեջ ապրում էր Արտի Ոգին, ով հսկում էր արտն ու բարիքը:

Հնձվորները արտերում հունձը սկսելուց առաջ կամ վերջացնելուց հետո ցորենի հասկերից հատուկ վարպետությամբ հյուսված փնջեր «Խաչբուռներ» էին պատրաստում և նվիրում իրենց արտատերերին, ու երբ գալիս էր արտը նորից ցանելու ժամանակը, հայը իջեցնում էր խաչբուռը պատից, ձեռքով փշրում, խառնում սերմացու ցորենին՝ Արտի Ոգուն նորից վերադարձնելով արտին:

Խաչբուռը կամ խաչփունջ, հյուսվել՝ ցորենի հասած արտերից հնձած առաջին փնջից և նվիրաբերել աստվածներին, որպես գոհաբանություն՝ բերքի համար:

Խաչբուռը հյուսվել է խաչի տեսքով, կապելով երկինքն ու երկիրը:

Պարապմունք

1.Խոսքի զարգացում

Թեմա՝ Վարդավառ

Տեսակը՝ Զրույց

Նպատակը՝ Սովորեցնել և զրուցել երեխաների մոտ ծեսրի մասին, ինչպես անցկացնել, նախապատրաստվել ծեսին:

Սովորեցին փոքրիկ քառատող

…Վարդավառ և վարդավառի կիրակի,

Արեգակը օրհնանք ու սեր է մաղում,

Կակաչներն են ծփում նման կրակի

Ու հովի դեմ կրակի պես կատաղում:

(Վահագն Դավթյան/հատված <<Թոնդրակեցիներ>> պոեմից)

Գեղարվեստական գրականություն

Թեման՝ ցորեն ցանել

Տեսակը՝ Բանաստեղծության ուսուցում

Նպատակը՝ երեխաներին սովորեցնել թե ինչպես են ցորեն ցանել և մշակել:

Ցորեն ցանել եմ ծորին,

Կը քաղեմ վարդեվորին,

Գլուխս ղուրբան կանեմ

Բայազդու ձիավորին:

Էկալոգիա

Թեմա՝ Խաչբուռ

Տեսակը՝ Զրույց

Նպատակը՝ Երեխաներին տալ գիտելիքներ թե ինչից է պատրաստվում խաչբուռը (ցորենի հասկերը) և թե ինչպես է հայ ժողովուրդը ցանել, մշակել ցորենի արտերը:

Տեղեկություն տալ երեխաներին, որ ցորենի արտերը մշակելուց նաև երգեր էին հյուսել:

Կերպարվեստային գործունեություն

Նպատակը՝ երեխաների հետ պատրաստել խաչբուռ, որպես խոհանոցային գիտելիք սովորեցնել պատրաստել ազգային ուտեստներ(խնձորով պիրոգ)

Ֆիզկուլտուրա- խաղալ <<ճոճանակ>> խաղը:

Երաժշտություն

Ուսուցանել <<Ցորեն եմ ցանել>> երգ

Ցորեն եմ ցանել

Արտը ծլել, ցանել

Հեռու տեղ ախպեր ունեմ

Ականջը կանչեմ:

Պար՝ <<Ճոր պար>>.

Ազգային մշակույթի յուրացում,տարածում,

●ազգային ժառանգության փոխանցում,

●ծանոթացնել հայ ազգային ծեսերին և տոներին:

Խնդիրներ

●Ուսումնասիրել վարդավառի ծեսը, ծիսական միջավայրը,

●առանձնացնել ծիսական այլ գործողությունները,ծիսական կերպարներին,որոնք առանցքային են,որոնց միջոցով իրականացվելու է ծեսը,

●յուրացնել ազգային,ծիսական երաժշտական նյութը,

●ուսումնական գործընթացը կազմակերպել դպրոցում, այգում, դաշտում, այլ բնական միջավայրում:

Երեխամերին ծանոթացնել մանկապարտեզի, հարազատ քաղաքի/գյուղի ավանդույթներին, տոներին: Դաստիարակել հարգանք տարբեր ազգությունների մարդկանց, նրանց սովորույթների նկատմամբ:

Ծանոթացնել ազգային նվագարաններին, ազգային ծիսակատարություններին, ազգային խոհանոցին:

Նախադպրոցական հաստատություններում ազգային տոներին, ծիսակատարություններին նվիրված միջոցառումների կազմակերպում՝ պահպանելով տոնի բուն խորհուրդն ու արարողակարգը: Թեմատիկ զրույցների կազմակերպում, գեղարվեստական գրականության, բանահյուսության տարբեր ժանրերի ընթերցում:

Ուսուցողական-ճանաչողական խաղերի, ազգային, ծիսական խաղերի կազմակերպում:

Եզրակացություն

Ինչպես հայրենիքն է սկսվում սահմանից, այնպես էլ կրթությունն է սկսվում նախակրթարանից: Եվ ես լինելով նախակրթարանում աշխատող դաստիարակ, իմ կարծիքն եմ հայտնում այն մասին, որ ն/դ տարիքից երեխայի մեջ սերմացանելով հայրենասիրությունը, հայրենիքի պատմությունը, ապագա սերունդը կլինի հաստատակամ իր որոշումների մեջ, ինչը ավելի խոր արմատներ կգցի դեպի իր հայրենիքը, հայրենիքի ավանդույթների մեջ:

●Իմանա իր ազգային պատկանելիությունը, իր ազգային առանձնահատկությունները, իմանա թե որն է իր լեզուն, իմչ ազգային ավանդույթներ և սովորույթներ ունեն հայերը:

Ունենա նախնական պատկերացումներ իր ընտանիքի պատմության, սովորույթների մասին:

Գաղափար ունենա իր հայրենիքի պատմության մասին:

●Ունենա տարրական գիտելիքներ ՀՀ- ի, հայ ժողովրդի սոցիալ-մշակութային արժեքների, կենցաղային սովորույթների, ազգային ավանդույթներին:

●Ունենա գիտելիքներ ազգային արվեստի և արհեստների վերաբերյալ, ճանաչի ազգային արհեստագետներին, նրանց աշխատանքները (կարպետագործություն, գորգագործություն):

●Իմանա ազգային ծեսերը, ավանդույթները:

●Իմանա և կարողանա վերապատմել 2/3/3-4 հայկական փոքրածավալ հեքիաթ ծեսերի մասին:

●Իմանա և կարողանա անգիր արտասանել 2/3 հայկական բանաստեղծություն կամ հատվածներ բանաստեղծություններից:

●Իմանա և կարողանա երգել 2/3 ազգային, հայրենասիրական, մանկական երգ:

●Իմանա և կարողանա պարել 2/3-4 ազգային, հայկական, մանկական պար:

●Իմանա և կարողանա խաղալազգային, ծիսական խաղեր:

●Ճանաչի ազգային նվագարանները:

●Ճանաչի ազգային ավանդական խոհանոցի ուտեստները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ռ. Ծառուկյան, Հ. Միտոյան, Լ. Սմբատյան, Ն. Նիկողոսյան, «Այլընտրանքային մոդելներով 5-6 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության կազմակերպումը», Դաստիարակի ուղեցույց, Երևան 2010,

2. Արթուր Շահնազարյան «Երաժշտությունը նախակրթարանում»,

3. Մարինե Սահակյան, Նախադպրոցականի ազգային դ ա ս ր ի ա ր ա կության հիմն ա հ ար ց ե ր ը Սոֆյա Արղությանի մանկավարժական հայացքներում, ուսումնաօժանդակ ձեռնարկ, Երևան մանկավարժ 2011,

4. Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի քոլեջ, Դիպլոմային նախագիծ Գայանե Մանուչարյան, Ժասմեն Ադամյան «Ազգային ծեսը նախակրթարանում», Ծեսերի, ծիսական գործողությունների իրականացում:
5. Մկրտչյան 4 Տոներ հայկական ժողովրդական ծեսեր, սոցվորույթներ հավատալիքներ ավանդույթ և արդիականություն 2010 էջ 101

6. https://marinemkrtchyan.files.wordpress.com/2013/08/d5a1d5a6d5a3d5a1d5b5d5abd5b6-d5aed5a5d5bdd5a5d680-d5bfd5b8d5b6d5a5d680.pdf

7.https://harutyunyananna85.files.wordpress.com/2016/06/d5a4d5abd5bad5acd5b8d5b4d5a1d5b5d5abd5b6-d5b6d5a1d5add5a1d5a3d5abd5ae-c2abd5a1d5a6d5a3d5a1d5b5d5abd5b6-d5aed5a5d5bdd5a8-d5b6d5a1d5ad1.pdf

8. https://marinemkrtchyan.files.wordpress.com/2016/04/d5b0d680-d5add5a1d5bcd5a1d5bfd5b5d5a1d5b6-c2abd5a1d5a6d5a3d5a1d5b5d5abd5b6-d5aed5a5d5bdd5a5d680-d5bfd5b8d5b6d5a5d680c2bb.pdf